

ՆՈՐ ԳՐԲԵՐ

«Խրատման նուշիւրում», աշխատասիրությամբ Ք. Լ. ՉՈՒԳԱՍՅԱՆԻ—
Հայաստան ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1966 թ.,
տպաքանակը՝ 1000, 212 էջ, գինը՝ 52 կ.

Այս գրքում համառոտակի քննության են առնվում նուշիւրվանի պարսկերեն խրատականի կազմվելու ժամանակն ու աղբյուրները, նրա ձևագիր ու տպագիր տարբերակները և ապացուցվում է, որ նուշիւրվանի հայերեն խրատները թարգմանված են պարսկերենից:

Աշխատության մեջ հրապարակվում են խրատների հայերեն ընդարձակ ու համառոտ խմբագրությունների և պարսկերեն տարբերակների քննական բնագրերը, իսկ վերջում հայերեն խրատների համադրական տախտակներն ու բառարանը:

Կ. Հ. ՃԻՆԳՈՋՅԱՆ — «Հայ-բուլղարական գրական կապերի պատմություն», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 252 էջ, գինը՝ 65 կ.

Մենագրությունը նվիրված է XIX դարի հայ-բուլղարական գրական հարաբերությունների լուսարանությանը, որն առաջին փորձն է այդ ասպարեզում: Աշխատության մեջ ցույց է տրված հայ առաջավոր գրողների ու գրական գործիչների բացառիկ հետաքրքրությունը բուլղար ժողովրդի աղջային-աղատագրական պայքարն արտացոլող գրականության նկատմամբ: Քննության են առնված բուլղար դասական գրողներ՝ Լ. Կարավելյովի, Ջ. Ստոյանովի և Ի. Վազովի հայրենասիրական երկերի հայերեն թարգմանությունները, պարզաբանված են դրանց լույս ընծայման շարժառիթները: Գիրքն ունի ուսուցիչական լեզվով ամփոփում:

Հ. Ա. ՕՐԲԵԼԻ (Կազմող), Դիվան հայ վիմագրության. պրակ 1, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 800, գինը՝ 1 ռ. 05 կ.

Ժողովածուն Հ. Ա. Օրբելու Անի քաղաքում կատարած երկարատև պեղումների արդյունքն է:

Գիտնականը պեղումներին ղուգընթաց համեմատել, ստուգել և հավաքել է ավերակների պատերին և բեկորների վրա հայտնաբերված 200-ից ավելի արձանագրություններ, որոնք ղետեղված են ժողովածուում:

Պրակի խմբագիրն է Ս. Գ. Բարխուդարյանը: